«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի և գրականության դասաժամերին*

Առարկան՝ *հայոց լեզու,գրականություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ազատուհի Աղքատյան*

Ուսումնական հաստատություն՝ *«Չարենցավանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն..... 3

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի և գրականության դասաժամերին 6

Եզրակացություն 14

Գրականություն 15

Ներածություն

Մարդու իսկական արժեքը որոշվում է այն բանով, թե որքանով է նա ազատագրվել եսասիրությունից, և թե ինչ միջոցներով է նա դրան հասել։

Ալբերտ Այնշտայն

«Արժեք» բառի բառարանային բացատրություններից առաջինը որևէ բանի՝ «դրական միավորով արտահայտված գինն է, արժողությունը», ապա հաջորդաբար ՝ «դրական հատկություն,արժանիք,կարևորություն, նշանակություն» ունենալը և , ի վերջո , «այն, ինչ որ մեծ արժողություն ունի,թանկ գին»։[1]

Այս առումով ահա կարևոր է , թե անձի համար ինչը (ինչերը) կարևորություն ունի,մեծ արժողություն , ինչպիսի դիրքորոշում ունի նա նյութական և հոգևոր արժեքների նկատմամբ։ Դա էլ ձևավորում է անձնային արժեհամակարգը։

Մասնագետները նշում են, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում , ընտանիք ստեղծում է իրեն բնորոշ արժեքային համակարգեր և վարքականոններ։Այնպես որ տարբեր մարդկանց,սոցիալական տարբեր խմբերի , տարբեր ընտանիքների արժեքային համակարգերը չեն կարող նույնական լինել։Ավելին, հաճախ հասարակական-քաղաքական,տնտեսական կյանքի փոփոխությունների արդյունքում փոփոխության են ենթարկվում նաև արժեքները։ Այն,ինչ արժեք էր համարվում մի դարաշրջանում,անգամ՝ մի քանի տասնամյակ առաջ, մեկ այլ դարաշրջանի կամ տասնամյակի համար կարող է արժեզրկվել։ Իսկ երբ փլուզվում են արժեքները, խախտվում են բարոյականության ընդունված չափանիշները, և հասարակության անդամների հարաբերություններում առաջանում է խզում ։ Այսինքն՝ խախտվում են

[1] Էդվարդ Աղայան,Արդի հայերենի բացատրական բառարան,Երևան,1976,էջ 132

համակեցության կանոնները,ինչի արդյունքում մարդու կյանքը կարող է վերածվել հուսախաբությունների և հիասթափությունների հարաճուն շղթայի։

Այս առումով է ահա առանձնահատուկ հանրակրթության դերը. արժեհամակարգի ձևավորումը նրա գլխավոր խնդիրն է ու հենքը։

Դժվար և ամենօրյա,ամենժամյա տքնաջան աշխատանք է դա, որի « արդյունքը» պիտի լինի հանդուրժողականության,մարդասիրության, խաղաղ համակեցության գաղափարները կրող,եսասիրության արատավոր ճիրաններից ազատագրված մարդ-անհատը։

Հետազոտության նպատակներն ու խնդիրները։ Առարկայական նոր ծրագրերում ներառվել են առանցքային 12 գաղափարներ՝ խաչվող հասկացություններ,որոնք նորություն են մեր կրթական համակարգում։ Դրանցից երեքը կոչվում են՝

- անհատ և հարաբերություններ
- անհատական և մշակութային արժեհամակարգ
- համաշխարհայնացում

Ուսուցման գործընթացի ողջ ընթացքում ,կարծում ենք, մեր նպատակը պիտի լինի անհատական և մշակութային արժեհամակարգի ձևավորումը,որից կբխեն անհատի մարդկային առողջ հարաբերություններն այլոց հետ, գիտակցումն այն բանի,որ իրենից՝ անհատից, շատ բան է կախված անարդարության հանդեպ անհանդուրժողականության ու պայքարի, աշխարհի վերափոխման,այն ավելի լավը դարձնելու գործում ։

Ի վերջո, մենք ապրում ենք գլոբալացման՝ համաշխարհայնացման, դարաշրջանում։Տարբեր ժողովուրդների,տարբեր հասարակությունների տարատեսակ արժեհամակարգերը,ուզենք,թե չուզենք,ներթափանցում են մեր կյանք։ Ոչ մի երկաթյա ճաղավանդակով, ոչ մի « չինական պարսպով » հնարավոր չէ կանխել այդ փոխազդեցությունները։ Ուստի հարկ է, որ յուրաքանչյուր անհատ ունենա իր մտածելու և գործելու կերպը,իր աշխարհընկալումն ու այս հարափոփոխ աշխարհում իր տեղը գտնելու և ինքնադրսևորվելու, դիրքորոշում ունենալու և բազմատեսակ ազդեցությունների ներքո իր ինքնությունը չկորցնելու հմտությունները։ «Եթե մարդը չի ցանկանում մտորել,աշխատել,ձևավորել իր արժեքային համակարգն ու աշխարհայացքը կամ պատասխանատվության իր բաժինն ունենալ իր աշխարհայացքի համար,սոցիալական հաստատությունները կարող են տարատեսակ

մանիպուլյացիաներ անել նրա գիտակցության հետ» [2] ,- շվեյցարացի փիլիսոփա, բժիշկ և երաժիշտ Ալբերտ Շվեյցերի համոզմունքն է:

Կրթության խնդիրը պիտի լինի համաշխարհայնացման այս դարաշրջանում ձևավորել այնպիսի արժեհամակարգ ունեցող անհատների,որոնք իրենց ստեղծարարությամբ կձևավորեն նոր որակի աշխարհ՝ հնարավորինս զերծ կործանարար պատերազմներից, մարդուն և բնությունը ոչնչացնող նորանոր զինատեսակներ հնարելու և ստեղծելու մոլագարությունից:

Արդ, մեր նպատակն է այս հետազոտության արդյունքում բացահայտել՝ ինչպե՞ս ձևավորել սովորողների արժեքային համակարգը մայրենիի և գրականության դասավանդման ընթացքում:

Խնդիր ենք դրել այդ նպատակին հասնելու համար դիտարկել և վերլուծել առարկայական ծրագրերով նախատեսված գրական ստեղծագործությունները հայ և համաշխարհային գրականությունից:

[2] Ձեռնարկ ավագ դպրոցի համար,10-12-րդ դասարաններ,Երևան,2014,էջ 21

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի և գրականության դասաժամերին

Անառարկելի է , որ անհատի գեղագիտական դաստիարակության գործում վիթխարի է ու բացառիկ գրականության դերը։ Այն ընթերցողի առջև բացում է տարբեր ժամանակների կյանքի ու մարդկային վարքագծի պատկերները,ձևավորում մարդու արժեքային համակարգը,կերտում բարոյական կերպարներ,նպաստում ընթերցողի լեզվամտածողության և աշխարհընկալման զարգացմանը։Եվ որովհետև մարդու հոգևոր կերպարի զարգացման հիմքը դրվում է նաև դպրոցում (իհարկե, առաջին տեղում ընտանեկան դաստիարակությունն է) , ուստի և այդ գործում հատկապես մեծ է մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասաժամերի դերը։

Հայ և օտարազգի նշանավոր գրողների կյանքի և ստեղծագործության ճիշտ ուսուցումը հանգեցնում է գեղեցիկի ու վեհի, քաղաքացիական պատասխանատվության ու մարդկային արժանապատվության արժևորմանը,այլանդակի ու ստորի, մորթապաշտության ու պարոնյանական «երեսփոխանության» դատապարտմանը։

Ինչու՞ ենք ասում՝ ճի՛շտ ուսուցում։ Պարզաբանենք ասվածը Չարենցի,Բակունցի,Մահարու և Նաիրի Զարյանի կենսագրությունների օրինակով։

7-րդ դասարանի գրականության դասագրքում իրար են հաջորդում վերը նշված հեղինակների կենսագրական տվյալներն ու առարկայական ծրագրով նախատեսված ստեղծագործությունները ։ Չորս գրող,որ ապրել ու ստեղծագործել են 20-րդ դարի ամենադրամատիկ,հակասական ժամանակաշրջանում, գրեթե միաժամանակ մուտք են գործել գրական անդաստան՝ կերտելով իրենց դեմքն ու դիմագիծը,ջանալով կայանալ թե՛ որպես նորագույն գրականության գործիչներ,թե՛ որպես նոր ժամանակների մարդ-քաղաքացիներ։

Չարենցի, Բակունցի ու Մահարու կենսագրական տվյալներին ծանոթանալուց հետո , Մահարու «Ինքնակենսագրականը» կարդալուց ու ստալինյան բռնադատության տարիների ողջ անհեթեթությունն ու սարսափը մերօրյա ժողովրդավարական արժեքների հետ համեմատելուց-հակադրելուց հետո աշակերտները ծանոթանում են Նաիրի Զարյանի կենսագրությանը։Այդ

ժամանակ ահա կարևորվում է ուսուցչի վարպետությունը սովորողների, որոնք ապագա քաղաքացիներն են, հոգեկերտվածքի ձևավորման չափազանց նուրբ,պատասխանատու գործում:

Զարյանի կենսագրությունը կարդալուց հետո սովորողների մեջ գլուխ է բարձրացնում ժխտումն ու քննադատությունը.ինչպե՞ս կարողացավ Զարյանը դավաճանել իր գրական ընկերներին և իր քնարին,երբ նույն մղձավանջային ժամանակներում Չարենցը չվախեցավ իր «եղբայրական ձեռքը պարզել» բանտում գտնվող Բակունցին: Աշակերտի համար տարակուսելի է դառնում,որ Զարյանի ստեղծագործություններն ընդգրկվել են դպրոցական դասագրքերում:

Հենց այս հարցադրմանը պիտի հաջորդի ուսուցչի պարզաբանումը. Այո՛, Չարենցի,Բակունցի,Մահարու կողքին անհրաժեշտաբար հիշում ենք Զարյանին և խոսում նրա մասին,որպեսզի նրա կյանքի օրինակով հիշենք ու գիտակցենք,որ ժամանակն ու սերունդները անաչառ դատավորներ են: Փոխվելու են ժամանակները, անցյալ են դառնալու բռնապետներն ու նրանց գաղափարախոսությունը, և սերունդները դատապարտելու են նրանց գործած հանցանքների ու սխալների համար: Ուրեմն մենք ևս պիտի հասկանանք,որ դժվար,խառնակ ժամանակներում,ինչ էլ լինի, պիտի ջանալ չկորցնել մարդկային ու քաղաքացիական որակները:Այս համոզմունքը պիտի դարձնել աշակերտի արժեքային համակարգի կարևորագույն կետերից մեկը:

Զարյանը մարդկայնորեն «մոլորվեց» ու մեղանչեց գրական ընկերների դեմ,իսկ արվեստը մոտ երկու տասնամյակ ծառայեցրեց բռնապետին,ոչ թե Ապոլոնին: Այդուհանդերձ չպետք է ուրանալ նրա գրական մեծ վաստակը: Նա ոչ միայն «Հացավան» վեպի,«Ռուշանի քարափը» պոեմի և «Ստալին» բանաստեղծության, այլ նաև «Արշակ և Շապուհ» պոեմի, «Երկու հանճարեղ գլուխ» հանճարե՛ղ բանաստեղծության (զարմանալիորեն գրված 1935-1936 թվականներին) և, վերջապես, «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության հեղինակն է: Աշակերտներին ասվում է,որ նա ի վերջո գիտակցել է իր գրական և մարդկային անցյալի սխալները , ձգտել քավել դրանք «Սպասում եմ քեզ» ժողովածուով: Պակաս ուսուցանող չէ Ն. Զարյանի՝ 7-րդ դասարանի դասագրքում ընդգրկված «Հայերեն» բանաստեղծությունը:Մայրենիի դերի ու նշանակության մասին լեզվի ու գրականության դասաժամերին խոսվում է անընդմեջ:Բանաստեղծությունը դարձյալ մտորելու, լեզվի կարևորությունը քննարկելու առիթ է ստեղծում ՝ հայ պատանիներին մղելով ընդունելու հայերենը՝ որպես ազգապահպան հզոր գործոն:

Ուստի հարկ է, որ մենք այսօր գնահատենք նրա գրական վաստակը , արժևորենք վերոնշյալ ստեղծագործությունների արտահայտած գաղափարները՝

հայրենասիրությունը, մարդկային առաքինությունը, իշխանավորի «թագակիր տխմար գլխի առաջ» չխոնարհվելու հզոր կամքի ուժը , վեհանձնությունն ու սեփական սխալները գիտակցելու քաջությունը։

Սովորողների մեջ մայրենիի, գրականության և առհասարակ դպրոցական բոլ որ դասաժամերին այս արժեքների ձևավորումը , համոզված ենք , առավել կարևոր է,քան անգամ այն, որ նրանք հիշեն քերականական բոլոր կանոնները, մաթեմատիկական բոլոր թեորեմներն ու ալգորիթմները, պատմության բոլոր տարեթվերը։ Ի վերջո, դպրոցն է կերտում վաղվա քաղաքացուն,որ պիտի ինքնադրսևորվի ամենուր՝ ընտանիքում, աշխատանքում, ընկերական ու հասարակական միջավայրերում և իհա՛րկե պետականակերտության գործում։ Թե որքանով մեր կրթական համակարգն ու դպրոցը կկարողանան ձևավորել այդպիսի քաղաքացիներ,այդքանով պայմանավորված կլինի բոլորիս վաղվա օրն ու բոլորիս պետությունը։

Աշակերտների գեղագիտական ու բարոյական դաստիարակության գործում ահռելի է նաև դասագրքերում ընդգրկված ստեղծագործությունների դերը։

Ընդ որում, պետք է նշել՝ որքան էլ ուսպլանով հատկացված դասաժամերը երբեմն չափազանց քիչ են լինում՝ ծավալուն գրական երկերը լիարժեքորեն ուսումնասիրելու համար, այնուամենայնիվ ուսուցչի առաջնային խնդիրը դառնում է գոնե դասարանում ընթերցելն ու լսել տալը մեր օրերում կարդալ չսիրող սովորողներից շատերին։Այդպիսով ուսուցիչը ոչ միայն ջանում է իր աշակերտներին հասու դարձնել ստեղծագործության արտահայտած գաղափարին,այլև սեր արթնացնել գրի ու գրականության հանդեպ։

Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» և Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքները վերը ասվածի վկայությունն են։ Երկու անզուգական ստեղծագործություններ պատմական նույն ժամանակաշրջանի վերաբերյալ և , ցավոք , այնքա՛ն արդիական ։

Հեղինակները վարպետորեն բացահայտում են, թե ինչ ավերիչ ազդեցություն ունի պատերազմը մարդու հոգեբանության վրա։ Այդ ժամանակ է բացահայտվում մարդու իսկական էությունը, այդ ժամանակ է սասանվում հատկապես մարդու հավատը արդարության հանդեպ։

Հաճի աղայի կերպարը արդարացված արգահատանք է առաջացնում ընթերցողների մեջ։ Ուսուցչի դերը շատ մեծ է, որպեսզի դեռահաս աշակերտների համար «բացի» պատմվածքի տողերն ու ենթատողերը.«Հաճի աղան , **ընտրելով սահնակի ամենահարմար տեղը**, նստեց, փաթաթվեց վերմակի մեջ ու մնաց», «Եվ հրդեհի մեջ պաշարվածի պես նա զգաց,որ տարերային մի ուժ

նրան միայն մի բան է թելադրում.փախչել,շուտով դուրս գալ մահի ճիրաններից:**Մնացածը՝ կին,երեխա,ընկեր,բարեկամ՝ նսեմացավ նրա աչքում**», «Հաճի աղան **բուռ հանգստությամբ** նկատեց,որ ամբողջ օրը չէր մտածել անդամալույծի մասին, և հիմա մտածելով՝ **անախորժություն զգաց**», կամ

« Շմավոնը կեղծ ու շիտակ զգացվեց, բերանը ծռմռեց, մոտեցավ, համբուրեց անդամալույծի ձեռքը և **անարցունք** աչքերը սրբելով՝ դուրս եկավ»: Այսպես բացվում-մեկնաբանվում է յուրաքանչյուր դիպուկ արտահայտություն, քննարկվում «**ավելորդ մարդ չկա աստծու առաջ, հոգին հոգի է**» գաղափարը: Դրա վրա է բևեռվում սովորողների ուշադրությունը՝ ուսուցանելու համար նրանց այն,որ բոլոր մարդիկ հավասար են, հոգի,սիրտ ու զգացմունք ունեն, ցավ և ուրախություն զգալու,սիրվելու և սիրելու ցանկություն ունեն՝ անկախ այն բանից՝ անդամալու՞յծ են ,թե՞ առանց ֆիզիկական արատի:

Արժեքային այս գաղափարը սովորողների մեջ որպես անքննելի ճշմարտություն սերմանելու գործը, ճշմարիտն ասած, միշտ էլ դրված է եղել ուսուցիչներիս վրա և հատկապես է՛ մեր օրերում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ կան բոլոր դպրոցներում (նկատի չունեմ բացառիկ օժտվածություն ունեցող սովորողներին): Նրանք ֆիզիկապես առողջ երեխաների պես ու նրանց կողքին ապրելու, կրթվելու, աշխատելու , Սահմանադրությամբ բոլոր քաղաքացիների համար սահմանված իրավունքներից օգտվելու իրավունք ունեն : Եվ, անշուշտ, առողջ մարդկանց աջակցության և հասկացողության կարիքն ունեն:

Դե իսկ հայրենիքի համար մղված պատերազմի արդյունքում անդամալույծ դարձած մարդկանց հանդեպ ակնածանքի ու երախտագիտության գիտակցումը կարևորելը,ըստ այդմ նրանց հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք դրսևորելը , հող հայրենիի զինվորյալը լինելը որպես գերագույն արժեք ներկայացնելն ու սովորեցնելը ուսուցիչներիս պարտքը պիտի լինի:

Կյանքում կողք կողքի ապրող «սևի ու սպիտակի» հավերժական բախման մասին է Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը: Սիմոններն ու կոստանդ աղաները եղել են բոլոր ժամանակներում ու թերևս կլինեն, քանի ապրում է մարդը այս երկրի վրա: Պատմվածքում կերտված կերպարները՝ մարդկանց ու երեք ձիերի, սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորելու լավագույն միջոց են: Կոստանդ աղան և նրա սպիտակ ձին դառնում են մեր շուրջը գոյություն ունեցող այլանդակի ու մերժելիի խորհրդանիշներ,Սիմոնի դաժան արարքը Ցոլակի հանդեպ անսահման կարեկցանք է արթնացնում և սովորեցնում,որ չի կարելի ցավ պատճառել ո՛չ մարդուն, ո՛չ էլ կենդանուն : Վերջապես ծանր է, չափազանց ծանր է ապրելը,երբ մարդիկ ջարդում են մարդու հավատը .«Պառավը լալիս էր...Հետո քանի երեկո իջավ,և զանգեր

զարկեցին,բայց մինչև մահ ,իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի ղողանջը որպես անանձնական օրհնություն ներս մտավ նրանց սև խրճիթը. . .»։[3]

Արդարության բարոյական սկզբունքի սերմանումը, սակայն,չպիտի իրականացվի լոկ գրական-գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով։ Դրանց լրացնելու պիտի գա ուսուցանողի անաչառությունը,անձնական օրինակը։Եթե ուսուցիչն անարդար վերաբերմունք է դրսևորում աշակերտի նկատմամբ,որքան ուզում է հրաշալի վերլուծի գրական երկն ու տպավորիչ խոսքով հանդես գա արդարության մասին,միևնույնն է, որոշիչը լինելու է իր վերաբերմունքը։

Մասնավորաբար մայրենիի,ապա և հայոց լեզվի ու գրականության ուսուցչի ուսերին հատկապես մեր օրերում մեծ պատասխանատվություն է դրված։ Նա է, որ դպրոց ոտք դրած աշակերտի հոգում և մտքում պիտի արմատավորի այն համոզմունքը, որ բազմաթիվ արժեքներից մեկը,թերևս կարևորագույնը, մայրենի լեզուն է։Նա է,որ իր գեղեցիկ ու անթերի խոսքով սեր պիտի արթնացնի հայոց լեզվի հանդեպ՝ մղելով սովորողին գիտակցելու,որ մայրենիին տիրապետելն ու նրա հանդեպ հոգածու լինելը,այն անաղարտ պահելը նախ և առաջ մեր ազգային ինքնության պահպանման նպատակն ունի։Այստեղ է ահա ուսուցչին օգնության գալու մեծն Մաշտոցի կյանքի և գործի ուսուցումը 9-րդ դասարանում։

Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը ուսուցանելիս կարևոր է առաջին հերթին ժամանակաշրջանի պատմական-քաղաքական կյանքի ներկայացումը՝ 387 թվականին Հայաստանի բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև, 301 թվականին քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած , սակայն դարավերջին դեռևս ժողովրդի կողմից այն չընկալած,ուստի և չընդունած լինելու իրողությունը։«Բաժանված լինելով երկու մեծ տերությունների՝ հռոմեական և պարսկական պետությունների միջև,հայ ժողովուրդը փաստորեն կորցրել էր ոչ միայն իր միասնականությունն ու անկախությունը,այլև ընկել էր քաղաքական ու մշակութային տարբեր ազդեցությունների տակ։….Եվ որովհետև տվյալ պայմաններում հայ ժողովրդի մեջ քրիստոնեության տարածումն ու արմատավորումը լոկ կրոնական խնդիր չէր,այլև քաղաքական,քանի որ նպատակ ուներ պատվար ստեղծելու ձուլման վտանգը կանխելու համար,ապա բնականաբար Մեսրոպը շատ ավելի մեծ ընդգրկումով էր ցանկանում լուծել հայ ժողովրդի՝ քրիստոնեական կրոնին հաղորդակից դարձնելու խնդիրը,քան այն,ինչին ինքը հասել էր իր քարոզչական գործունեությամբ»[4],- գրում է Էդվարդ Աղայանը։

[3] Գրականություն 7,Երևան ,2023, էջ 71

[4] Հայ մշակույթի նշանավոր գործիչները,V-XVIII դարեր Երևան,1976,էջ 9

Սովորողներին պատկերացում տալով 4-րդ դարավերջին և 5-րդ դարի սկզբին հայ ժողովրդի առաջ ծառացած մարտահրավերների մասին՝ արժևորում ենք Մաշտոց – Երևույթի ու նրա գտած Հնարի դերը և նշանակությունը մոտավորապես այս կերպ՝ վարից վեր.



Գրականության դերը մեծ է նաև սովորողների կամային հատկանիշների ձևավորման առումով:

8-րդ դասարանի դասագրքում,բացի հայ գրականության երախտավորներից՝ Մուրացան, Հովհաննես Թումանյան,Ավետիք Իսահակյան,Ալեքսանդր Շիրվանզադե,Նար-Դոս, Գրիգոր Զոհրապ,Դանիել Վարուժան,Միսաք Մեծարենց,Վահան Տերյան, ընդգրկված է համաշխարհային գրականության ինքնատիպ դեմքերից մեկը՝ Էռնեստ Հեմինգուեյ: Նրա «Ծերունին և ծովը»

վիպակը կյանքի զանազան հարվածներից չընկրկող,ոչ մի դեպքում չհանձնվող անհատի փառաբանություն է: Հրաշալի ստեղծագործություն, որի շնորհիվ ուսուցիչը անխուսափելիորեն կարող է սերմանել մարդկային արժանապատվության գիտակցում: Ծերունու սկզբունքը՝ մարդուն կարելի է անգամ սպանել,բայց մարդուն հաղթելն անկարելի է, հարկավոր է դարձնել յուրաքանչյուր սովորողի հավատամքը:

Դե իսկ Մեծարենցի «Ըլլայի՛,ըլլայի՛» շարքը, «Տու՛ր ինձի, Տե՛ր» բանաստեղծությունը լավագույնս հնարավորություն են տալիս ուսուցչին սովորողների աչքում արժեզրկելու եսասիրությունը և արժևորելու այլասիրությունը (հումանիզմ)՝ որպես բարոյական մեծագույն արժեքներից մեկը:

Հայ ժողովրդի հոգեկերտվածքը ներկայացնող և նրա բարոյական բարձր արժանիքները իր մեջ խտացնող յուրատեսակ հանրագիտարան է «Սասնա ծռեր» էպոսը: Դյուցազնավեպի հերոսները՝ առաջին ճյուղից մինչև չորրորդ ճյուղ, ազատասիրության,մեծահոգության,քաջության,արդարամտության,առաքինության,պարտքի ու պատասխանատվության,հանուն երկրի գալիքի՝ անձնազոհության,երախտագիտության, մեծի հանդեպ հարգանքի, հայրենասիրության ու խաղաղասիրության կրողներն են:

Էպոսի արծարծած գաղափարները բոլոր ժամանակների համար են,ազգային են և համամարդկային միաժամանակ, ուստի և «Սասնա ծռեր» -ը անհատի արժեհամակարգի ձևավորմանը նպաստող առանձնահատուկ դասագիրք է :

Էպոսի միջոցով կարելի է դաստիարակել տված խոստումը կատարելու, կյանքի փորձով իմաստնացած մարդու խոսքին ունկնդիր լինելու,իրեն արված լավության համար երախտագետ լինելու և փոխհատուցելու հատկանիշներ:

Էպոսը սովորեցնում է զերծ մնալ ազգային կործանարար սնապարծությունից՝ գնահատելով նաև մյուս ժողովուրդների (թեկուզ և թշնամի) առավելությունները:Ասվածի վկայությունն են Իսմիլ խաթունին մեր ժողովրդի տված «օղորմիները»՝ ի նշան երախտագիտության,քանի որ նա խնամել է մանուկ Դավթին, նրան պաշտպանել Մըսրա Մելիքի ցասումից:

Արաբ ծերունու կերպարով հայ ժողովուրդը հաստատել է այն հավերժական ճշմարտությունը, որ հասարակ ժողովրդի համար ատելի են պատերազմները. ժողովուրդն ուզում է խաղաղ ու ստեղծագործ կյանքով ապրել՝ հայ լինի,թե արաբ :

Փոքր Մհերի՝ Ագռավաքարում փակվելու խորհուրդը հենց ա՛յդ երազանքի բանաձևումն է՝ չարությունից զերծ նոր,արդար,առատ աշխարհում ապրելը .

Քանի աշխարք չար է,

Հողն էլ դալբցեր է,

Մեջ աշխարքին ես չեմ մնա։

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա,

որ էլնենք էդտեղեն։

Եզրակացություն

Պատերազմները, ավա՜ղ, չեն դադարում՝ մարդ արարածին հեռացնելով այն կերպարից, որով, ասում են, Աստված ստեղծել էր նրան՝ ի՛ր կերպարով և ի՛ր նմանողությամբ :

Բայց Թումանյանն առավել դիպուկ է նկարագրել մարդուն.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան

Հազար դարում հազիվ դառավ…Մարդասպան,

Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,

Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան։

Թումանյանական յուրաքանչյուր քառյակ փիլիսոփայական խտացում է մարդու,մարդկայինի,աշխարհի,կյանքի ու Հավերժի մասին։ Դրանց ուսուցումը ուսուցչին լայն հնարավորություն է ընձեռում բարոյական բարձր արժեքներ ձևավորելու սովորողների մեջ, նրանց խորհել տալու և գնահատելու կյանքը,ազատ ապրելու և սիրելու պարգևը.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,

Տանջում, տանջվում, որոնում է ու դրժբախտ է նա կրրկին.

Է՛յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,

Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի։

Եվ ուրեմն , գրականության դասավանդման ընթացքում հույժ կարևոր է սովորողների մեջ բարձր՝ ազգային ու համամարդկային արժեքների հետևողական ձևավորումը , պետության, հասարակության , ընտանիքի և հարազատների առաջ պատասխանատու քաղաքացու կերտումը :

Գրականություն

1. Էդվարդ Աղայան,Արդի հայերենի բացատրական բառարան,Երևան,1976,էջ 132

2.Ձեռնարկ ավագ դպրոցի համար,10-12-րդ դասարաններ,Երևան,2014,էջ 21

3.Գրականություն 7(դասագիրք),Երևան ,2023, էջ 71

4.Հայ մշակույթի նշանավոր գործիչները,V-XVIII դարեր,Երևան,1976,էջ 9

5.«Սասնա ծռեր» էպոս